

Սամվել Ա. Պողոսյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏՈՒՄ ԱՆՏԱՆՏԻ ԶՈՐՔԵՐԻ ԱՓՈՒՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(1914 թ. սեպտեմբեր – 1915 թ. մարտ)*

Բանալի բառեր – Ալեքսանդրետ, Կիլիկիա, Անտանտի
գորքերի ավիանում, Դարդանել, Գալիպոլի:

Մուտք

Հետադարձ հայացք նետելով Առաջին աշխարհամարտի սկզբնական փուլում նախագծված, սակայն այդպես էլ չիրականացված Ալեքսանդրետի ծովածոցում Անտանտի գորքերի ավիանուման ծրագրի վրա՝ ներկա հրապարակման մեջ նպատակ ունենք բացահայտել այն անկյունաքարային գործոնները, որոնք հաճախ փոխում են մեր պատմության ընթացքը:

Նման իրողությունների անտեսման կամ ոչ ճիշտ հաշվառման արդյունքում համաշխարհային պատմության որոշ իրադարձություններ երբեմն անդառնալի հետևանքներ են ունեցել մեր ժողովրդի համար: Որովհետև ակնհայտ է, որ Ալեքսանդրետի ծովածոցում Անտանտի գորքերի ավիանուման ծրագրի իրականացումը կարող էր Օսմանյան կայսրությանը դուրս բերել պատերազմից և սահմանափակել Մեծ եղեռնի աշխարհագրական շրջանակը:

1914 թ. աշնանից Անտանտի պետական ու ռազմական գործիչների և կառավարությունների կողմից քննարկման սեղանին էր դրվել Ալեքսանդրետի ծովածոցում ավիանում կատարելու նախագիծը: Այն արժանացավ բրիտանացի գրեթե բոլոր պետական ու ռազմական գործիչների և որոշ ֆրանսիացի փորձագետների հավանությանը: Իսկ ռուսական իշխանությունները խնդրում էին դաշնակիցներին գործողությունն իրագործել հնարավորինս արագ, և անգամ հայերն էին պատրաստակամություն հայտնում ամեն կերպ աջակցելու բրիտանական գորքերի ավիանումանը Կիլիկիայում: Թվում էր՝ ոչինչ չի խանգարում այդ ռազմագործողությունը սկսելուն, որն իրագործվելու էր Դարդանելում բրիտանական նավատորմի հարձակմանը զուգահեռ: Սակայն Ալեքսանդրետի ռազմագործողությունը վերջին պահին

*Հոդվածն ընդունվել է տպագրության 21. 07. 2017:

կանխվեց և փոխարինվեց Գալիպոլիում ափհանման արկածախնդրական քայլով: Փորձենք ներկայացնել Ալեքսանդրետում ափհանման վերաբերյալ քննարկումները, այդ ռազմագործողության ձախողման պատճառները և հաշվարկել դրա իրականացման հնարավոր հետևանքները:

1. Օսմանյան կայսրությանը հարվածելու բրիտանական նախագծերը 1914 թ. աշնանը

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կիլիկիայում գործերի ափհանում իրականացնելու և Օսմանյան կայսրության դեմ ռազմական գործողություններ ծավալելու նախաձեռնությամբ հանդես են եկել Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Դեռևս 1914 թ. սեպտեմբերին, երբ Օսմանյան կայսրությունը չէր ներքաշվել Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, և Անտանտի երկրները ջանքեր էին գործադրում նրա չեզոքությունը պահպանելու ուղղությամբ, բրիտանական կառավարության առաջ երկու անգամ բարձրացվել է թուրքերի պատերազմի մեջ մտնելու դեպքում Ալեքսանդրետից նրանց հարված հասցնելու հարցը:

1914 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանում բրիտանական ծովային առաքելության ղեկավար, փոխծովակալ Մարկ Բերրը առաջարկում էր հունական ուժերի հետ միասին Կիպրոսից հարձակվել Ալեքսանդրետի վրա, որպեսզի կանխեն թուրքերի հարձակումը Եգիպտոսի ուղղությամբ¹: Սեպտեմբերի 26-ին Մեծ Բրիտանիայի Հնդկաստանի գործերով նախարարության ռազմական քարտուղար Էդմունդ Բարրոուն նույնպես առաջարկեց Թուրքիայի հետ պատերազմի դեպքում հարվածել ոչ թե Դարդանեղի, այլ Ալեքսանդրետի ուղղությամբ²:

Մեծ Բրիտանիան, հենվելով իր հզոր նավատորմի հնարավորությունների վրա, կարող էր Օսմանյան կայսրությանը հուժկու հարված հասցնել միաժամանակ երկու՝ Դարդանեղի և Կիլիկիայի ուղղություններով: Վերջինիս երկու խոշոր նավահանգիստները՝ Ալեքսանդրետն ու Մերսինը կարող էին բրիտանական ռազմածովային նավատորմի համար հենակետեր լինել Միջերկրականի արևելքում, իսկ Կիլիկիայի գրավումով կկտրվեր Բեռլին-Բաղդադ երկաթուղային մայրուղին, որը Փոքր Ասիան կապում էր արաբական երկրամասերին և դարձել էր կայսրության տնտեսական ու ռազմական զարկերակը:

Այսպիսով, պատերազմի սկզբից բրիտանացի ռազմական ու պետական գործիչների օրակարգում էր Գերմանիայի կողմից Օսմանյան կայսրության հանդես գալու դեպքում թուրքերին հնարավորինս հզոր հարված հասցնելու հարցը: Նրանց ուշադրությունը սևեռված էր և՛ Դարդանեղի, և՛ Ալեքսանդրետի վրա: Հետաքրքիրն այն է, որ Դարդանեղում գործողությանը դեմ էր դաշնակիցներից Ռուսաստանը, իսկ Կիլիկիայում ափհանմանը՝ Ֆրանսիան: Հետևաբար, բրիտանական կողմն իր հաշվարկներն անելիս ստիպված էր դիմակայելու դաշնակիցների ճնշումներին ու միաժամանակ

1 Տե՛ս Churchill W., The World Crisis, Toronto, 1923, էջ 534:

2 Տե՛ս Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement: The British Promise of November 1914. «The American Historical Review», Vol. 70, No. 4 (July, 1965), էջ 1021, 1023:

հեռահար նպատակային քայլեր կատարել:

1914 թ. նոյեմբերի 25-ին Մեծ Բրիտանիայի ռազմական խորհրդի նիստում ռազմական նախարար Հորացիո Քիթչեները բարձրացրեց Ալեքսանդրետում ավիանում կատարելու հարցը, որը պաշտպանեց նաև ռազմածովային նախարար (ծովակալության առաջին լորդ) Ուիլսոնը: Խնդիրը բարձրացվեց Եգիպտոսի վրա հարձակումը կանխելու նպատակադրումով³: Ինչպես վերևում տեսանք, բրիտանական որոշ բարձրաստիճան գործիչներ նախկինում արդեն իսկ առաջ էին քաշել Կիլիկիայից թուրքերին հարվածելու գաղափարը, սակայն առաջին անգամն էր, որ նման բարձր մակարդակով շրջանառության մեջ էր դրվում Օսմանյան կայսրությանը Ալեքսանդրետից հարվածելու նպատակը:

Վերոնշյալ նախագծի արձարծումը համընկնում էր այն ժամանակաշրջանին, երբ Եգիպտոսում բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելի հետ հանդիպել էր Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը և առաջարկել Կիլիկիայում ավիանում կատարել: 1914 թ. նոյեմբերի 12-ին նա դիմել էր Եգիպտոսի բրիտանական հրամանատարությանը, որպեսզի զորք ուղարկեն՝ գրավելու Կիլիկիայի ծովեզերքը՝ Մերսինի ու Ալեքսանդրետի նավահանգիստները, Ադանայի դաշտը: Պողոս Նուբարը խոստանում էր, որ լեռնագավառների հայերը կապտանվեն և կօժանդակեն դաշնակիցներին, եթե նրանց զենք ու զինամթերք տրամադրվի: Բրիտանական ուժերի ավիանումը կապահովեր տեղի հայության անվտանգությունը, իսկ հայկական շարժումը հնարավորություն կտար ավելի համարձակ ազգային պահանջներ առաջ քաշել⁴: Եգիպտական զորքերի հրամանատարն իր հերթին կարողացել էր այդ ծրագրի արդյունավետության հարցում համոզել Հ. Քիթչեներին:

2. Ավիանումն խնդրի 1915 թ. հունվարյան քննարկումները

Նախնական հետախուզական տեղեկություններ հավաքելուց և վերլուծություններ կատարելուց հետո՝ մեկ ամիս անց, բրիտանական կողմը կրկին քննարկման սեղանին դրեց Կիլիկիայի ուղղությամբ հարձակման նախագիծը:

1915 թ. հունվարին Հ. Քիթչեները և Ջ. Մաքսվելը էլ ավելի էին հակվել Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու գաղափարին: Նրանք կարծում էին, որ դա կարող էր կանխել թուրքական արշավանքը դեպի Սուեզի ջրանցք: Դրանով կարող էին կտրել Կիլիկիայով անցնող երկաթուղային հաղորդակցությունը մի կողմից՝ Փոքր Ասիայի, մյուս կողմից՝ Սիրիայի ու Միջագետքի միջև: Ջ. Մաքսվելը համոզված էր, որ Ալեքսանդրետի ուղղությամբ արշավանքը «ամենաաղիւրին, ամենաապահով և ամենաարդիւնաւէտ»⁵ միջոցն է, և մեծաթիվ զորքի կարիք չկա:

Այս անգամ քննարկումը համընկավ դաշնակից Ռուսաստանի օգնու-

3 Տե՛ս Varnava A., Imperialism first, the war second: the British, an Armenian legion, and deliberations on where to attack the Ottoman empire, November 1914–April 1915, «The Historical Research», vol. 87, no. 237 (August, 2014), էջ 548:

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68:

5 **Եսփունճեան Ա.**, Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919–1921 թթ., Գահիրէ, 1977, էջ 1110–1111:

թյան խնդրանքին: 1915 թ. հունվարի 2-ին Ռուսաստանի գերագույն գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովը դիմում է Մեծ Բրիտանիային՝ խնդրելով Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններ սկսել, որպեսզի թուլացնեն թուրքական բանակի ճնշումը Կովկասյան ճակատի ռուսական բանակների վրա⁶: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Սարիղամիշի ճակատամարտը դեռ չէր ավարտվել ռուսների հաղթանակով, իսկ Թիֆլիսում դեռևս մտավախություն կար, որ թուրքական գերակշիռ բանակը կարող է գրավել Անդրկովկասը:

Դաշնակցի օգնության խնդրանքը բավարարելու համար բրիտանական ռազմական և քաղաքական իշխանությունները կազմակերպեցին լուրջ քննարկումներ: 1915 թ. հունվարի 3-ին Կահիրեի բրիտանական հետախուզության պետ, գեներալ-լեյտենանտ Գիլբերտ Քլեյթոնը գեկուցագիր էր պատրաստել, որում Ալեքսանդրետի ռազմագործողությունը համարվում էր լավագույն տարբերակ Եգիպտոսի վրա թուրքական հարձակումը կանխելու համար: Նա համոզված էր, որ դրանով ոչ միայն Սիրիայի թուրքական բանակը, այլ նաև Բաղդադն ամբողջությամբ կկտրվեին թիկունքից, իսկ դեպի Սև ծով տանող ուղիների շրջափակման դեպքում նույնիսկ Կովկասի թուրքական բանակը կհայտնվեր ծանր վիճակում: Միևնույն ժամանակ Գ. Քլեյթոնը կարծում էր, որ Ալեքսանդրետը լավագույն նավահանգիստն է Միջերկրականի արևելքում ռազմածովային հենակետի համար, իսկ հետախուզական տվյալներով՝ տեղի բնակչությունը պատրաստ էր աջակցել բրիտանացիներին⁷:

Փաստորեն մինչ այդ բրիտանական կողմը բավականին լուրջ հետախուզական տվյալներ էր հավաքել Կիլիկիայի և այնտեղ ռազմական գործողություններ ծավալելու հնարավորության վերաբերյալ: Ուստի հունվարի 5-ին Կահիրեի հետախուզական վարչությունը կրկին բարձրացրեց Ալեքսանդրետը գրավելու հարցը և դրա կարևորությունը: Օրինակ էր բերվում թուրքական նավատորմի հրամանատար, գերմանացի ծովակալ Վիլհելմ Սուշոնի կարծիքը Ալեքսանդրետի ռազմավարական կարևորության մասին, ըստ որի՝ այդ նավահանգստին տիրողը կգերիշխեր Միջերկրականի արևելքում, այդ թվում՝ Կիպրոսի և Սուեզի վրա: Կահիրեի բրիտանական հետախուզությունն առաջարկում էր զինել 4.000-5.000 կիլիկիացիների, որոնք բրիտանացի սպաների հրամանատարությամբ կարող էին հեշտությամբ թուրքերի առաջ փակել Ալեքսանդրետին մոտենալու բոլոր լեռնային ճանապարհները⁸:

Այսպիսով, Եգիպտոսի բրիտանական հրամանատարությունը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել էր Ալեքսանդրետում ավիանում կատարելու հնարավորությունները և դրա հետևանքները: Դրանով պայմանավորված՝ նա հետագայում էլ շարունակեց ամենատարբեր նախագծեր ներկայացնել Կիլիկիայում ավիանում կատարելու վերաբերյալ:

1915 թ. հունվարի 8-ին Բրիտանիայի ռազմական խորհրդի նիստում Հ. Քիթչեները կրկին առաջարկեց ավիանում կատարել Ալեքսանդրետում:

6 Տե՛ս Տրուխանովսկի Վ., Ուիստոն Զերչիլ: Քաղաքական կենսագրություն, Եր., 1972, էջ 191:

7 Տե՛ս Varnava A., Imperialism first, էջ 549:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 549-550:

Նա համոզված էր, որ 30.000–50.000 զինվորը բավարար է ռազմագործողությունը հաջողությամբ ավարտին հասցնելու համար: Որոշվեց, որ այդ նախագիծը քննարկեն ռազմական գերատեսչությունը և ծովակալությունը: Հունվարի 13-ի ռազմական խորհրդի նիստում Ու. Չերչիլը Հ. Քիթչենների աջակցությամբ այս անգամ բարձրացրեց մի կողմից՝ Ալեքսանդրետում ավիանում իրականացնելու և մյուս կողմից՝ Դարդանեղուն միաժամանակյա նավային հարձակում կազմակերպելու նախագիծը: Մինչ վերոհիշյալ երկու նիստերը Հ. Քիթչեններն արդեն պատրաստել էր Ալեքսանդրետում ավիանում կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր ուսումնասիրություններն ու փաստաթղթերը⁹:

Ինչպես տեսանք, մինչ այդ որոշակի նախապատրաստական աշխատանքներ էին տարվել Եգիպտոսում՝ Կիլիկիայի ուղղությամբ ռազմագործողություն սկսելու արդյունավետությունը որոշելու համար, հատկապես ակտիվ կերպով հետախուզական տեղեկություններ ու վերլուծություններ էին հավաքվել: Ալեքսանդրետում հարձակումը ոչ միայն կօգներ թուլացնելու Կովկասյան ռուսական բանակի վրա թուրքերի ճնշումը, այլ նաև կկանխեր Եգիպտոսի վրա հարձակումը:

Փաստորեն, 1915 թ. հունվարին բրիտանական կառավարությունը քննարկեց Թուրքիային հզոր հարված հասցնելու երկու հավանական ուղղությունները: Ռազմական նախարար Հ. Քիթչենները կարծում էր, որ անհրաժեշտ է հարվածել Կիլիկիայի ուղղությամբ, իսկ ռազմածովային նախարար Ուինստոն Չերչիլը, որին աջակցում էր նաև ֆինանսների նախարար Դեյվիդ Լյոյդ Ջորջը առաջարկում էր միաժամանակ հարձակվել նաև Դարդանեղի վրա և հաջողության դեպքում գրավել մայրաքաղաք Կ. Պոլիսը:

Հ. Քիթչեններն անհրազործելի էր համարում Կ. Պոլիսը գրավելու ծրագիրը և առաջարկում էր ավիանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, ներխուժել Անտիոքի դաշտ և շարժվել հյուսիս-արևելք՝ Դիարբեքի կամ Վանի վիլայեթներում միանալու ռուսական բանակին¹⁰: Դրանով Թուրքիան կբաժանվեր երկու մասի և հեշտությամբ կգրավվեր դաշնակիցների կողմից:

Կ. Պոլիսը գրավելու նախաձեռնության հեղինակն էր Ու. Չերչիլը: Դրանով նա ցանկանում էր սևծովյան նեղուցների վրա հաստատել բրիտանական վերահսկողություն՝ լավ իմանալով, որ այդ տարածքներին հավակնում է դաշնակից Ռուսաստանը: Ավելին, Ու. Չերչիլը դեռևս 1914 թ. սեպտեմբերի սկզբին էր առաջ քաշել Դարդանեղը հունական ուժերի միջոցով գրավելու գաղափարը¹¹: Իսկ 1914 թ. նոյեմբերի 25-ին ծովակալության կողմից կառավարությանն էր ներկայացվել Դարդանեղի ուղղությամբ ռազմական գործողությունների մի նախագիծ, որը երկար ժամանակ քննարկման չէր արժանացել¹²: Դարդանեղում ռազմագործողություն սկսելու վերաբերյալ սկզբնական սառը վերաբերմունքը պայմանավորված էր մի շարք բրիտանացի ծովակալների բացասական տրամադրվածությամբ:

9 Տես նույն տեղում, էջ 548:

10 Տես **Ահարոնյան Գ.**, Մեծ երազի ճամբուն վրայ (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրայ), Լոս Անձելես, 1986, էջ 61–62:

11 Տես **Churchill W.**, The World Crisis, էջ 532:

12 Տես **Howard H.N.**, The Partition of Turkey. A Diplomatic History, 1913–1923, Norman, 1931, էջ 122:

Նրանք համոզված էին, որ այդ ուղղությամբ հաջողության հասնելու հնարավորությունները չափազանց փոքր էին:

Թուրքիայի դեմ խոշորածավալ ռազմական գործողություն սկսելու Ռուսաստանի խնդրանքը բրիտանական կառավարությունը քննարկեց 1915 թ. հունվարի 13-ին: Ու. Չերչիլն առաջարկում էր նավատորմի ուժերով ձեռքել Դարդանեղի նեղուցը և մոտենալ Կ. Պոլսին: Այդ նախագծին դեմ էր ծովային առաջին լորդ, ծովակալ Ջոն Ֆիշերը, որը արկածախնդրություն էր համարում առանց ցամաքային մեծաքանակ ուժերի աջակցության սկսել այդ ռազմագործողությունը: Նա խնդիրն ուսումնասիրել էր դեռևս տարիներ առաջ, երբ մի քանի անգամ անցել էր Դարդանեղի նեղուցով կամ նրա նավատորմը կայանել էր մոտակայքում: Այդ նախաձեռնությանը դեմ էր նաև Հ. Քիթչեները: Սակայն վարչապետ Հերբերտ Ասքուիթը որոշեց ընթացք տալ Ու. Չերչիլի նախագծին¹³:

Բայց ինչպես տեսանք, Դարդանեղի ռազմագործողությունը պետք է կատարվեր միայն նավատորմի ուժերով, իսկ ցամաքային զորքերի ավհանման վայր էր դառնալու Ալեքսանդրետը:

Ալեքսանդրետում ավհանում կատարելու առաջարկով հունվարի 20-ին հանդես եկավ նաև այնտեղի բրիտանական նախկին հյուպատոս Կատոնին: Նա մատնանշում էր, որ նավահանգստի գրավումը հեշտ կլինի, քանի որ թուրքերն անշան ուժեր ունեն այնտեղ, իսկ Ադանայում տեղակայված է միայն 30.000-անոց թուրքական զորաքանակ, որն ամենամոտն է Ալեքսանդրետին: Նա տեղեկացնում էր, որ տեղացի հայերը կաջակցեն բրիտանացիներին. կկտրեն հեռագրաթելերը, կոչնչացնեն կամուրջները, իսկ Մարաշում, Ջեյթոնում և Այնթապում կարող են հաջողությամբ պարտիզանական պայքար ծավալել: Կատոնին համոզված էր, որ Ալեքսանդրետի ու դրա շրջակայքի գրավման դեպքում թուրքերի սիրիական բանակը կոչնչանա, քանի որ կզրկվի համալրումներից: Նա կարծում էր, որ Ալեքսանդրետում իրենց հաղթանակը թուրքերի համար կարող է ավելի ծանր պարտություն լինել, քան հաջողությունները Կովկասում կամ Պաղեստինում¹⁴:

Փաստորեն գրեթե բոլոր բրիտանացի գործիչները, որոնք քիչ թե շատ ծանոթ էին Ալեքսանդրետին ու այնտեղ ավհանում կատարելու հնարավորություններին, միանշանակ կողմ էին այդ ռազմագործողությանը:

1915 թ. հունվարի 16-ին Ու. Չերչիլը Ֆրանսիայի ծովային կցորդին տեղեկացրեց Դարդանեղով Մարմարա ծով մտնելու և Ալեքսանդրետը գրավելու ծրագրերի մասին: Նա խնդրեց, որ ֆրանսիական նավատորմն իր վրա վերցնի Լաթաքիայից մինչև Եգիպտոս ընկած հատվածի պաշտպանությունը: Իսկ հունվարի 18-ին Հ. Քիթչեներին ուղարկած նամակում Ու. Չերչիլը Դարդանեղ-Ալեքսանդրետ համատեղ ռազմագործողությունը համարում էր միանշանակ հաղթող: Նա կարծում էր, որ եթե նույնիսկ Դարդանեղում հաջողության չհասնեն, ապա դա կարող են մեկնաբանել որպես շեղող գործողություն Ալեքսանդրետի համար, քանի որ բրիտանական նավատորմի անհաջողությունը կարող էր Արևելքում դիտվել որպես այդ

13 Տե՛ս **Fisher J.**, *Memories and Records*, vol. I, New York, 1920, էջ 71-72, 79, 81-82:

14 Տե՛ս **Varnava A.**, *Imperialism first*, էջ 550:

կայսրության թուլություն¹⁵:

Այսպիսով, Դարդանելի և Ալեքսանդրետի ուղղությամբ միաժամանակյա գրոհին կողմ էին բրիտանական քաղաքականությունը որոշող գրեթե բոլոր խոշոր պետական գործիչները՝ վարչապետ Հերբերտ Աքրուիթը, արտգործնախարար Էդուարդ Գրեյը, ռազմական նախարար Հ. Քիթչենները, ռազմածովային նախարար Ու. Չերչիլը, ծովակալ Զ. Ֆիշերը: Եվ եթե Դարդանելում հաջողություն հասնելուն որոշ չափով կասկածով էին վերաբերում Հ. Քիթչենները և Զ. Ֆիշերը, ապա Ալեքսանդրետի ուղղությամբ հաջողությանը հավատում էին բոլորը:

Թվում էր՝ ոչինչ չի կարող խանգարել Ալեքսանդրետում բրիտանական զորքերի ավիանման ծրագրին: Սակայն այդ նախագիծը տապալվեց ոչ թե թուրքական դիմադրության, այլ Բրիտանիայի դաշնակից Ֆրանսիայի ընդդիմության և մի շարք այլ գործոնների պատճառով: Վերջինս կտրականապես դեմ արտահայտվեց Կիլիկիայում բրիտանական ավիանմանը: Իսկ բրիտանացիները իրենց հերթին լուրջ ջանքեր չգործադրեցին, որ այդ հարցում համաձայնության գան ֆրանսիացիների հետ: Երկու կողմերի ծավալապաշտական նկրտումների բախումը խոչընդոտեց համագործակցությանը:

3. Ֆրանսիայի ընդդիմությունը

1915 թ. հունվարի 19-ին Լոնդոնում ֆրանսիական ծովային կցորդը Ֆրանսիայի ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին տեղեկացրեց նախապատրաստվող Ալեքսանդրետ-Դարդանել ռազմագործողության մասին: Նա համոզված էր, որ դա անհրաժեշտ քայլ է, և հավաստիացնում էր, որ բրիտանացիները վստահեցրել են, որ դա որևէ հետագա իրավունքներ չի տա նրանց Ալեքսանդրետի նկատմամբ: Չնայած նման հավաստիացումներին՝ Վ. Օգանյորը կտրականապես դեմ էր այդ գործողությանը: Հունվարի 24-ին նա համաձայնեց Լոնդոնում հանդիպել Ու. Չերչիլին, սակայն պայման դրեց, որ բրիտանացիները ձանաչեն Ֆրանսիայի իրավունքները Սիրիայում և Ալեքսանդրետում, ինչպես նաև այդ ուղղությամբ ռազմական գործողություններ ծավալեն միայն Ֆրանսիայի համաձայնության և մասնակցության դեպքում: Հունվարի 26-ին Վ. Օգանյորի և Ու. Չերչիլի հանդիպումից հետո բրիտանական կողմը հրաժարվեց Ալեքսանդրետում ավիանում իրականացնելու ծրագրից, և որոշվեց հարձակվել միայն Դարդանելի ուղղությամբ՝ ֆրանսիացիների հետ համատեղ¹⁶: Ու. Չերչիլի համար գլխավորը Կ. Պոլսի գրավումն էր, հետևաբար նա բավարար ջանքեր չգործադրեց պաշտպանելու Ալեքսանդրետի ավիանման նախագիծը:

Ֆրանսիական պետական գործիչները մտավախություն ունեին, որ Մեծ Բրիտանիան ձգտում է գրավել Ալեքսանդրետը և պահել իրեն: Դրան հակադրելու համար անհրաժեշտ էին համարում, որ այդ տարածաշրջանում ռազմական գործողություններ չիրականացվեն առանց ֆրանսիական զորքերի մասնակցության, իսկ ֆրանսիական զորքեր Արևելքում գրեթե չկային:

Ֆրանսիացիները խանդով ու անհանգստությամբ էին արձագանքում,

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 551:

նույնիսկ երբ բրիտանական ռազմանավերը մոտենում էին Ալեքսանդրե-տին: Դա էր պատճառը, որ անգամ ֆրանսիական ականակիր նավ ուղարկվեց Սիրիայի ափերի մոտ¹⁷:

Այն պնդումը, որ այդ շրջանում Արևելքում Ֆրանսիան բավարար ուժեր չունեի, համապատասխանում է ճշմարտությանը: Սակայն դա չի նշանակում, որ նա չէր կարող գործեր ուղարկել: Տվյալ ժամանակաշրջանում Ֆրանսիայում կային 1 մլն 200 հազար պահեստայիններ, և 1915 թ. փետրվարի 13-ին կառավարությունը որոշում էր ընդունել անհրաժեշտության դեպքում նրանց մի մասից բանակ կազմավորել՝ Կիլիկիայում կամ Սիրիայում կռվելու համար¹⁸: Այսպիսով, Ֆրանսիան ցանկության դեպքում կարող էր գորաբանակ ուղարկել Կիլիկիա և գործողություններ ծավալել բրիտանացիների հետ կամ առանձին: Հետևաբար, այնքան էլ ճիշտ չէ Կիլիկիայի նկատմամբ Ֆրանսիայի ձգտումները և դաշնակից բրիտանացիներին խանդելն ու խոչընդոտելը բացատրել Արևելքում գործեր չունենալու փաստարկով: Հատկապես, եթե նկատի ունենանք, որ Դարդանելում ավիանում իրականացնելու բրիտանացիների որոշման մասին տեղեկանալով՝ ֆրանսիացիներն անմիջապես ցամաքային զորախումբ ուղարկեցին այնտեղ:

1915 թ. հունվարի 27-ին բրիտանական իշխանությունները ֆրանսիացիներին տեղեկացրին, որ Ալեքսանդրետում չեն պատրաստվում ռազմագործողություններ կատարել առանց Ֆրանսիայի¹⁹: Ու. Չերչիլը ֆրանսիացիներին հավաստիացրել էր, որ եթե Սիրիայում կամ Կիլիկիայում երբևէ դաշնակցային նավատորմը ռազմական գործողություններ սկսի, ապա դա պետք է ղեկավարի ֆրանսիացի ծովակալ, իսկ եթե Ալեքսանդրետում ավիանում կատարվի, ապա միայն երկու կառավարությունների համաձայնությամբ²⁰:

1915 թ. հունվարի 28-ին բրիտանական կառավարությունը վերջնականապես որոշում է հարձակվել Դարդանելի վրա՝ չնայած որոշ ծովակալներ դա անհնար էին համարում և մտահոգություն էին հայտնում, որ պարտության դեպքում Մեծ Բրիտանիայի հեղինակությունն Արևելքում ծանր հարված կստանա²¹:

Ավստրալացի պատմաբան Անդրեկոս Վարնավան, ուսումնասիրելով Ալեքսանդրետում ավիանում չկատարելու պատճառները, հանգել է հետևյալ եզրակացությանը. «Միակ պատասխանը, թե ինչու Ալեքսանդրետում այդպես էլ համատեղ ավիանում չիրականացվեց, և՛ բրիտանական, և՛ ֆրանսիական կողմի անգործությունն էր, և հատկապես ֆրանսիական կողմի»²²:

Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան նաև պայմանավորվածություն ձեռք

17 Տե՛ս **Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents**, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, էջ 85:

18 Տե՛ս **Varnava A.**, Imperialism first, էջ 551:

19 Տե՛ս **Սերոբեան Մ.**, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով: Վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրե, 1948, էջ 302:

20 Տե՛ս **Եսփուճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 1121:

21 Տե՛ս «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները», Եր., 1990, էջ 159:

22 **Varnava A.**, Imperialism first, էջ 551-552:

բերեցին, որ Դարդանելի ռազմագործողության ավարտից հետո Միջերկրականի արևելքի դաշնակցային նավատորմը դրվելու է ֆրանսիական հրամանատարության ենթակայության տակ²³:

Բրիտանիայի ծովակալությունը պետք է փետրվարին կազմակերպեր հարձակումը Կ. Պոլսի ուղղությամբ²⁴: Մայրաքաղաքի գրավումով ակնկալում էին, որ Թուրքիան դուրս կգա պատերազմից, անվտանգ կդառնան Եգիպտոսը և Բալկանյան թերակղզին, իսկ Դարդանելի ու Բոսֆորի ռազմավարական մեծ կարևորություն ունեցող նեղուցների վերահսկողությունը կանցնի Մեծ Բրիտանիային:

Այսպիսով, բրիտանական իշխանությունները որոշեցին հարձակվել Կ. Պոլսի ուղղությամբ, ինչն իրագործելու համար անհրաժեշտ էր մեծ նավատորմ և հսկայական բանակ, իսկ Կիլիկիան մատնվեց անուշադրության, թեև այնտեղ հաջողության կարող էին հասնել վերոնշյալից անհամեմատ ավելի փոքր ուժերով:

4. Դարդանելի ռազմագործողությունը և Ռուսաստանի արձագանքը

Ռուսական կողմը կտրականապես դեմ էր դաշնակիցների կողմից Կ. Պոլսի գրավման ցանկացած փորձին: Ռուսաստանը երկար ժամանակ ձգտում էր տիրել նեղուցներին, որոնք իր համար ունեին հսկայական տնտեսական, ռազմաքաղաքական և բարոյական կարևորություն: Ռուսները ոչ անհիմն կասկածներ ունեին, որ եթե Կ. Պոլիսը գրավվեր դաշնակից տերություններից որևէ մեկի կողմից, ապա իրենք հնարավորություն չէին ունենա տիրելու այդ կարևոր քաղաքին: Փաստորեն, Ռուսաստանին օգնելու պատրվակով բրիտանական կառավարությունը որոշեց ոտնահարել ռուսական շահերը՝ լավ իմանալով, որ դա կգայրացնի դաշնակցին:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովն իր հուշերում գրում է. «Յուրաքանչյուր ռուսի համար նեղուցներին տիրելը ծառայել է և կծառայի որպես ջերմ հույսերի ու ձգտումների առարկա»²⁵ և ապա ավելացնում է. «Ռուսական պետության պատմական զարգացման գործընթացը չի կարող ավարտին հասնել այլ կերպ, քան մեր տիրապետության հաստատումով Բոսֆորի ու Դարդանելի վրա»²⁶: Բնականաբար, նեղուցների հարցում բրիտանական հավակնությունները չափազանց բացասաբար ընդունվեցին ռուսների կողմից: Ս. Սազոնովն այդ մասին նշում է. «Որքան որ ես համակրում էի Թուրքիայի ու Բուլղարիայի միջև սեպ խրելու գաղափարին, այնքան էլ ինձ համար տհաճ էր նեղուցների ու Կ. Պոլսի գրավումը մեր դաշնակիցների և ոչ թե ռուսական գործերի և Սևծովյան նավատորմի միջոցով»²⁷:

Դեռևս 1914 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար դերկումս Է. Գրեյը և Գեորգ Ե թագավորը Լոնդոնում ռուսական դեսպան Ալեքսանդր

23 Տե՛ս **Halpern P.**, The Anglo-French-Italian Naval Convention of 1915, «The Historical Journal», v. 13, no. 1 (March, 1970), էջ 110:

24 Տե՛ս **Howard H.**, The Partition of Turkey, էջ 122:

25 **Сазонов С.Д.**, Воспоминания, Москва., 2002, с. 270.

26 Նույն տեղում, էջ 275:

27 Նույն տեղում, էջ 288:

Բենկենդորֆին խոստացել էին, որ պատերազմից հետո նեղուցների և Կ. Պոլսի հարցը լուծվելու է Ռուսաստանի շահերին համապատասխան²⁸: Սակայն ռուսական կողմի մտահոգությունն արդարացված էր, քանի որ բրիտանական գործիչների զգալի մասը դեմ էր նեղուցների վրա ռուսական տիրապետության հաստատմանը:

Դարդանելի ռազմագործողությունը ծրագրելու հիմքում առկա բրիտանական կառավարող շրջանակների հեռահար հակառուսական մտադրությունների մասին հետագայում խոստովանել է նաև Է. Գրեյը. «Անգլիական քաղաքականությունը միշտ էլ նպատակ է հետապնդել Ռուսաստանին թույլ չտալ մոտենալ Կ. Պոլսին և նեղուցներին. մենք դրա համար պայքարել ենք Ղրիմի պատերազմում... և դա էր մեր քաղաքականության հիմնական ուղղությունը Բիքոնսֆիլդի ղեկավարությամբ... Ներկայումս Անգլիան մտադիր է զավթել Կ. Պոլիսը այն հաշվով, որ երբ Անգլիան և Ֆրանսիան կարողանան Ռուսաստանի օգնությամբ շահել պատերազմը, խաղաղություն հաստատվելուց հետո Ռուսաստանը չստանա Կ. Պոլիսը»²⁹:

«Չերչիլի դարդանելյան կամպանիան, – գրում է բրիտանացի պատմաբան Վոլֆգանգ Գոթլիբը, – հիմնավորվում էր երկու գործոնով. անգլոռուսական հին մրցակցությամբ և Մերձավոր արևելքում Մեծ Բրիտանիայի նոր նկրտումներով»³⁰: Ինչպես տեսնում ենք, նեղուցների հարցում բրիտանական հավակնությունների նկատմամբ ռուսական կողմի բացասական դիրքորոշումը անհիմն չէր: Այդ քայլը արդարացիորեն դիտվում էր որպես Ռուսաստանի առաջ սևծովյան նեղուցները փակելուն ուղղված հեռագնաց նպատակ:

Ուստի 1915 թ. հունվարի 19-ին տեղեկանալով Դարդանելի ուղղությամբ բրիտանական հարձակում նախապատրաստելու մասին՝ Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը պահանջեց դրանում ապահովել նաև ռուսական ռազմածովային ուժերի մասնակցությունը կամ հետաձգել արշավանքը: Սակայն Ռուսաստանի փոխարեն Ու. Չերչիլը գերադասեց Դարդանելի ռազմագործողության մեջ ապահովել Ֆրանսիայի մասնակցության երաշխիքը³¹: Այսպիսով, բրիտանական կողմն արհամարհեց դաշնակցի կարծիքը և ընդդիմությունը:

Բերված փաստերը վկայում են, որ սխալ կլինի Կիլիկիայի ուղղությամբ հարձակման նախագծից Մեծ Բրիտանիայի հրաժարվելը մեկնաբանել միայն Ֆրանսիային «չնեղացնելու» ձգտումով: Պարզապես Մեծ Բրիտանիան ավելի կարևոր էր համարում սևծովյան նեղուցներին տիրելը:

28 Տե՛ս **Kerner R.**, Russia, the Straits, and Constantinople, 1914–1915, «The Journal of Modern History», The University of Chicago Press, Vol. 1, No. 3 (Sept., 1929), էջ 407:

29 **Grey E.**, Twenty Five Years, 1892–1916, vol. II, London, 1925, էջ 180:

30 Մեջբերումը ըստ՝ **Կիրակոսյան Զ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ., Եր., 1967, էջ 431:

31 Տե՛ս **Մարտիսյան Ս.**, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915–1918 թթ.), Եր., 2005, էջ 52:

5. Դարդանելյան արկածախնդրության սկիզբը և Ալեքսանդրետում ավիանման գաղափարից վերջնական հրաժարումը

Դարդանելի գործողությունն իրականացնելու համար բրիտանաֆրանսիական կողմը կենտրոնացրեց 11 գծանավ, 1 գծային և 4 թեթև հաճանավ, 16 էսկադրոնային ականակիր, 7 տրալշիկ, 1 հրետանավ: Նրանց դիմադրում էին թուրքական I և II բանակները (200.000 զինվոր), որոնք ունեին 200 հրանոթ՝ դաշնակիցների 280-ի դիմաց: 1915 թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 18-ը մի քանի անգամ տեղի ունեցած Անտանտի ռազմածովային ուժերի հուժկու գրոհներն ավարտվեցին անհաջողությամբ³²: Մարտի 18-ի հզոր գրոհից հետո դաշնակիցները հսկայական կորուստներ ունեցան և որոշեցին դադարեցնել հարձակումները: Սակայն թուրքերը ևս զգալի կորուստներ էին կրել, իսկ նրանց զինամթերքը գրեթե ամբողջությամբ սպառվել էր: Թուրքերն ու գերմանացիները դեռ մի քանի օր սպասում էին նոր հարձակման՝ չհավատալով, որ վերջնականապես հաղթել են բրիտանական նավատորմին³³:

Ինչպես տեսնում ենք, բրիտանական նավատորմի հզորության և անպարտելիության մասին տարածված լեգենդը թույլ չէր տալիս թուրքերին հավատալ սեփական հաղթանակին: Բայց այդ օրը մեծ հարված հասցվեց Բրիտանիայի և նրա նավատորմի հեղինակությանը. փաստ, որից այդքան վախենում էին բրիտանացի պետական ու ռազմական գործիչները:

Ճակատագրի հեզնանք կարելի է համարել այն իրողությունը, որ շարքից դուրս եկած դաշնակցային 6 նավերից երեքը պայթել էին ականների վրա, իսկ երեքին վնասագերծել էր թուրքական բանակի հայազգի սպա Սարգիս Թորոսյանի հրետանային մարտկոցը: Նրա դիպուկ կրակոցներից սուզվեցին 1 բրիտանական և 1 ֆրանսիական նավ, լուրջ վնասվածք ստացավ «Ազամեմնոն» հաճանավը, որի վրա հետագայում ստորագրվեց Մուդրոսի զինադադարը³⁴:

Այսպիսով, Դարդանելում ավիանում կատարելու բրիտանական իշխանությունների որոշումից հետո Կիլիկիան անուշադրության մատնվեց: Ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի հետևանքով բրիտանացիները, մեծ զոհեր տալով, ծանր պարտություն կրեցին, հոգս ցնդեց բրիտանական նավատորմի անպարտելիության մասին մինչ այդ գոյություն ունեցող առասպելը, վարկաբեկվեց նրա հեղինակությունն Արևելքում, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման:

1915 թ. մարտի 16-ին Հ. Քիթչեները կրկին բարձրացրեց Ալեքսանդրետը գրավելու հարցը: Դրան նախորդել էր բրիտանական ռազմական և ծովային իշխանությունների խորհրդակցությունը, ուր քննարկվել էր Ալեքսանդրետի ռազմավարական կարևորության խնդիրը Մեծ Բրիտանիայի համար: Հ. Քիթչեները համոզված էր, որ Ալեքսանդրետը պետք է պահել Բրիտանիային, քանի որ այն դուրս է Սիրիայից, որի նկատմամբ նկրտումներ

32 Տե՛ս Հարությունյան Ա., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918), Եր., 1983, էջ 191-192:

33 Տե՛ս «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը», էջ 186-188:

34 Տե՛ս Թորոսյան Ա., Դարդանելից մինչև Պաղեստին, Եր., 2012, էջ 38-45:

ուներ Ֆրանսիան³⁵: Հաջորդ օրը ծովակալությունում կազմված հուշագիրն ամբողջությամբ համապատասխանում էր Հ. Քիթչենների նկրտումներին Ալեքսանդրետի նկատմամբ և հիմնավորում էր այն գրավելու ռազմաքաղաքական ու տնտեսական անհրաժեշտությունը, չնայած ռազմածովային նախարար Ու. Չերչիլը Ֆրանսիային խոսք էր տվել միայնակ չգործել Ալեքսանդրետի ուղղությամբ³⁶:

Այսպիսով, բրիտանական կողմը ձգտում էր գրավել ու իրեն պահել Ալեքսանդրետը՝ հաշվի չառնելով Ֆրանսիայի նկրտումները: Նաև սրանով էր պայմանավորված այն փաստը, որ բրիտանացիները լուրջ քայլեր չարեցին՝ համոզելու ֆրանսիացիներին, որպեսզի միասնական ափիանում կատարվեր:

Ուստի 1915 թ. մարտի 18-ին Հ. Քիթչենները հրամայեց Միջերկրածովյան դաշնակցային ռազմարշավային ուժերի հրամանատար գեներալ Յան Համիլթոնին, որպեսզի որևէ գործողություն չիրականացնի մինչև նավատորմը չանցնի Դարդանելի նեղուցը³⁷: Դա կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Հ. Քիթչենները դեռ մտադիր էր ցամաքային զորքերն օգտագործել Ալեքսանդրետում ափիանում կատարելու նպատակով:

Չնայած ռազմական նախարարության և ծովակալության համոզմանը, որ Ալեքսանդրետում անհրաժեշտ է ափիանում կատարել՝ վարչապետ Հ. Ասքուիթը մարտի 24-ին վերջնականապես մերժեց այդ ծրագիրը³⁸: Հավանաբար այդ որոշման վրա ազդեց նաև Ֆրանսիայի դիմադրությունը, նաև այն հանգամանքը, որ Բալկանյան դեռևս չեզոք երկրների վրա Ալեքսանդրետում հարձակումը կարող էր որևէ ազդեցություն չունենալ:

1915 թ. ապրիլի 25-ից մինչև 1916 թ. հունվարի 9-ը բրիտանացիները երկրորդ արկածախնդիր գործողությունը կազմակերպեցին: Նրանք Ալեքսանդրետի փոխարեն ափիանում կատարեցին Գալիպոլի թերակղզում: Մի քանի ամիս տևած Դարդանելի ռազմագործողության ժամանակ բրիտանացիներն օգտագործեցին ավելի քան 400.000 զինվոր, կորցրին՝ 120.000-ը: Թուրքիան կորցրեց 218.000 զինվոր³⁹:

Դարդանելի ռազմագործողության ընթացքում գրեթե կես միլիոնանոց բրիտանաֆրանսիական ուժերն անհաջողության մատնվեցին և կորցրին հարյուր հազարից ավելի զինվոր: Իսկ Կիլիկիայում կարող էին հաջողության հասնել մի քանի անգամ ավելի փոքրաթիվ ուժեր ուղարկելով և, բնականաբար, աննշան կորուստներով:

Գալիպոլի ռազմագործողության դաշնակցային գլխավոր շտաբի հրամանատարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Ջերալդ Էլիսոնը պատերազմից հետո խոստովանեց, որ եթե Գալիպոլի փոխարեն ափիանում կատարվեր Ալեքսանդրետում, ինչպես նախապես որոշված էր, ապա Թուրքիայի դիմադրությունը կկտրուրվեր մինչև 1915 թ. վերջը: «Տեղի չէին ունենա ոչ Միջագետքյան արշավանքը, ոչ հայկական կոտորածները, ոչ քարշ գալը Սինայի թերակղզու ավազների միջով, ոչ Գազայի ձակատամարտերը և ոչ

35 Տե՛ս Varnava A., Imperialism first, էջ 552:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 553:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 554:

38 Տե՛ս նույն տեղում:

39 Տե՛ս Готлиб В., Тайная дипломатия во время Первой мировой войны, Москва, 1960, էջ 182:

էլ Պաղեստինյան մարտերը: Ամենայն հավանականությամբ Բուլղարիան չէր միանա Կենտրոնական տերություններին, Սերբիան կփրկվեր, և ռուսական աղետը երբեք տեղի չէր ունենա: Վերջապես, մենք կազատվեինք ռազմածովային խայտառակությունից, որն ունեցանք Դարդանեղի պարտության պատճառով և զոհաբերված հսկայական թվով մարդկային կյանքերից ու ազգային արժանապատվության [կորստից], որն իր հետևից բերեց Գալիպոլի արկածախնդրությունը»⁴⁰, - գրում է Ջ. Էլիսոնը:

Ամերիկյան կոնգրեսական, նախկինում Եգիպտոսում ԱՄՆ ներկայացուցիչ, գնդապետ է. Լիթլը 1918 թ. փետրվարի 7-ին Կոնգրեսում ելույթի ժամանակ սխալ համարեց Ու. Չերչիլի՝ Դարդանեղի, այլ ոչ թե Ալեքսանդրեոսի վրա հարձակվելու նախաձեռնությունը: Կոնգրեսականը վստահ էր, որ Կիլիկիայում ափհանման դեպքում, որը երկաթուղային կարևոր հանգույց էր հանդիսանում, բրիտանական զորքերը կարող էին շարժվել Կ. Պոլիս, Երուսաղեմ կամ Արաբիա: Նա զարմանք էր հայտնում, որ բրիտանացիները չգնացին այդ քայլին, ինչի շնորհիվ Սիրիայի թուրքական բանակը կարող էր ոչնչացվել⁴¹:

Գերմանական մարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը (1916-ից գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ) 1920 թ. հրատարակած իր հուշերում Կիլիկիայի ուղղությամբ հնարավոր ափհանման հետևանքների մասին գրում է. «Թերևս ոչ ամբողջ պատերազմի ընթացքը, բայց հաստատ մեր օսմանյան դաշնակցի ձակատագիրը դուրս կգար մեր ձեռքից, եթե Անգլիան այդ երկրամասում գործելու որոշում ընդուներ կամ նույնիսկ լրջորեն փորձեր: Տավրոսից հարավ գտնվող տիրույթները Թուրքիան կկորցնէր, եթե անգլիացիներին հաջողվեր ափհանում կատարել Ալեքսանդրեոսի ծոցում և այնտեղից շարժվեին արևելք: Այդպես վարվելու դեպքում նրանք կկորեին Օսմանյան կայսրության սնուցող երակը, որի միջոցով թարմ արյուն և այլ կենսական ուժեր հոսում էին սիրիական, միջագետքյան և մասամբ նաև կովկասյան բանակներին: Ճիշտ է, եղած արյան քանակը և զորքերի արժեքը բավականին փոքր էր, բայց դրանք թույլ կտային թուրքական բանակներին ձգել պաշտպանությունը երկար ժամանակ, քանի դեռ թշնամու գործողություններն ու հարձակումները բավարար չափով նախապատրաստված և շատ դեպքերում ապաշնորհ ու անարդյունավետ կգործադրվեին:

Ալեքսանդրեոսի ծոցի պաշտպանությունը դրված էր թուրքական մի բանակի վրա, որը չունէր պայքարելու ընդունակ որևէ զորամաս: Յուրաքանչյուրը, որ կարող էր պիտանի լինել առաջնագծում, աստիճանաբար տեղափոխվել էր Սիրիա և Միջագետք: Ավելին, ծովափնյա պաշտպանության հրետանին տվյալ պահին ավելի շատ արևելյան երևակայություն էր, քան ռազմական իրականություն: Էնվեր փաշան ինձ ձգգրիտ ներկայացրեց իրավիճակը հետևյալ բառերով. «Իմ միակ հույսը նրանում է, որ թշնամին չի հայտնաբերի մեր թուլությունը այս ծայրահեղ ծանր վայրում»⁴²:

Թուրքական 4-րդ բանակի հրամանատար Ջենալ փաշան իր հուշերում

40 Ellison G., The Perils of Amateur Strategy, London, 1926, p. 27.

41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 5:

42 Out of My Life by Marshal von Hindenburg, trans. F. A. Holt, London, New York, Toronto and Melbourne, 1920, p. 294.

խոստովանում է, որ 1915 թ. սկզբին իր ուժերն անբավարար էին Սիրիան, Պաղեստինը, Կիլիկիան պաշտպանելու համար⁴³: Ինչպես Ջեմալի հուշերից է երևում, Կիլիկիայում Անտանտի երկրների զորքերի ավիանում կատարելը լուրջ դժվարությունների չէր հանդիպի: Սակայն այդ ուղղությունից թուրքերին հարված հասցնելու բազմաթիվ նախագծերն այդպես էլ իրականություն չդարձան Ֆրանսիայի կոշտ ընդդիմության հետևանքով: Վերջինս դեմ էր բրիտանական ուժերով գործողություններ ծավալելուն այն տարածաշրջանում, որի նկատմամբ հավակնություններ ուներ:

Այսպիսով, երկար քննարկումներից հետո բրիտանական իշխանությունները որոշում են ավիանում կատարել Դարդանելում և Կիլիկիան անուշադրության է մատնվում: Ալեքսանդրետում ավիանման ծրագրի համառ անտեսումը բրիտանաֆրանսիական հավակնությունների բախման ու ծավալապաշտական մրցակցության հետևանք էր: Երկու տերություններն էլ աչք ունեին Միջերկրականի արևելքի ամենակարևոր նավահանգստի վրա: Քանի դեռ չէր կնքվել Սայքս-Պիկոյի համաձայնագիրը (1916), Ֆրանսիան կասկածում էր, որ բրիտանացիները կփորձեն տիրել այդ կարևոր հենակետին: Բրիտանիան իր հերթին ամեն կերպ ցանկանում էր Ֆրանսիային հեռու պահել Ալեքսանդրետից: Նույնիսկ Սայքս-Պիկոյի համաձայնությունից հետո բազմաթիվ բրիտանացի պետական ու ռազմական գործիչներ անհրաժեշտ էին համարում հաստատվել այդ ռազմածովային հենակետում: Բայց պետք է նշել, որ միայն 1918 թ. դեկտեմբերին բրիտանացիները վերջնականապես համաձայնեցին ձանաչել Ֆրանսիայի իրավունքները Կիլիկիայում, որի փոխարեն ֆրանսիացիները ստիպված էին Բրիտանիային զիջել Մոսուլի նավթաբեր շրջանը⁴⁴:

Այսպիսով, 1915 թ. Ֆրանսիան կտրականապես դեմ էր առանց իր մասնակցության ավիանմանը Կիլիկիայում, իսկ Բրիտանիան իրական ցանկություն չուներ թույլատրելու ֆրանսիական զորքի մուտքը Ալեքսանդրետ, թեկուզ բրիտանական զորախմբի կողքին: Այս ամենը ի վերջո հանգեցրեց Ալեքսանդրետում ավիանման ծրագրից հրաժարվելուն, ինչը կարող էր հաջողությամբ պսակվել առանց մեծ ջանքերի և կորուստների: Դրա փոխարեն գործադրվեց Դարդանել-Գալիպոլիի արկածախնդրությունը: Այդ ձանապարհով բրիտանացիները փորձեցին փակել ռուսների մուտքը Միջերկրական՝ դրան մասնակից դարձնելով Ֆրանսիային: Բայց միևնույն ժամանակ վերջինին չթույլատրվեց ոտք դնել Ալեքսանդրետ, քանի որ բրիտանացիները հույս ունեին առաջին իսկ հնարավորության դեպքում Կիլիկիայում ավիանում կատարել միայնակ՝ առանց Ֆրանսիայի:

Դարդանելի ռազմագործողության առաջին փուլի անհաջողությունը համարձակություն տվեց թուրքական իշխանություններին սկսելու Հայոց ցեղասպանության իրականացման նախօրոք մշակված ծրագրի գործադրումը: Իսկ Կիլիկիայում ավիանման հաջողությունը կարող էր փրկել ոչ միայն կիլիկիահայերին, այլ նաև սահմանափակել Մեծ եղեռնի իրականացման հնարավորությունները, քանի որ կփակվեին տարագրության ձանապարհները, իսկ տեղային կոտորածների փորձերը կհանդիպեին դիմա-

43 Slevin *Memories of a Turkish statesman, 1913-1919*: By **Djemal Pasha**, New York, 1922, էջ 167:

44 Slevin **Кайзер Ж.**, Европа и новая Турция, Москва, 1925, էջ 125:

դրության: Ուստի նույնիսկ եթե երիտթուրքերը որոշակի կոտորածներ կազմակերպեին, ապա դրանք այն ահավոր հետևանքները չէին ունենա և չէին հանգեցնի ամբողջ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայաթափմանը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ալեքսանդրետի փոխարեն Գալիպոլիում հապճեպորեն իրականացված ափհանումը ռազմավարական լուրջ սխալ էր, որը ծանր հետևանքներ ունեցավ բրիտանացիների համար: Նախապես Ալեքսանդրետում նախատեսված ու բավական մանրամասն կերպով նախապատրաստված բրիտանական զորքերի ափհանման նախագիծը Ֆրանսիայի առաջին իսկ ընդդիմության հետևանքով մի կողմ դրվեց: Ընդամենը մեկ-երկու օրվա ընթացքում փոփոխության ենթարկվեց Օսմանյան կայսրության տարածքում դաշնակցային զորքերի ափհանում կատարելու վայրը: Նախապես մշակված ծրագրի փոխարեն ափհանում կատարվեց մի վայրում, որը հարկ եղած չափով չէր ուսումնասիրվել: Հետևաբար, Գալիպոլիում դաշնակցային զորքերի հսկայական կորուստներն ու խայտառակ պարտությունը սպասելի էին:

Մա պատմության այն դրվագներից է, երբ արդեն գրեթե իրողություն դարձած գործողությունը հապճեպորեն վերանայվեց՝ հանգեցնելով խիստ բացասական հետևանքների: Ալեքսանդրետում հաղթանակի հասնելու հնարավորությունը խոչընդոտվեց Գալիպոլիի ռազմագործողության ոչ օրինաչափ, պատահական միջամտությամբ: Այս օրինակը վկայում է, որ մեծ տերությունները միշտ չէ, որ առաջնորդվում են վերջնական, որոշակի և հստակ շահերով, որովհետև դրանք որոշող անհատ գործիչները և պետական կառույցները հաճախ ունենում են ամենատարբեր կարծիքներ: Հետևաբար, «պետական շահ» հասկացությունը շատ հարաբերական է և կառուցվում է որոշակի շրջանակների տեսակետների, քաղաքական ու տնտեսական շահերի, ինչու՞ չէ, նաև անձնական հարաբերությունների հենքի վրա: Ուրեմն պատահական և չհաշվարկված գործոնների դերը պատմության կերտման գործում երբեմն վճռական նշանակություն է ստանում՝ ապացուցելով պատմության դիվային հատկանիշի մասին Ֆ. Բրոդելի հայտնի ասույթի ճշմարտացիությունը:

Փաստորեն, 1915 թ. սկզբին Ու. Չերչիլը և նրա համախոհները, որոնց գլխավոր նպատակը դաշնակից Ռուսաստանի առաջ դեպի Միջերկրական տանող ծովային ուղու փակումն էր, կարողացան խոչընդոտել Հ. Քիթչենների ու նրա կողմնակիցների ավելի իրատեսական ծրագրի իրականացմանը: Սակայն Չերչիլի «հաղթանակը» իրականում հաղթանակ էր Օսմանյան կայսրության և պարտություն Մեծ Բրիտանիայի ու արևմտահայության համար: Երեք դաշնակից տերությունների շահերի բախումը Կիլիկիայում, նեղուցներում ու Կովկասում Օսմանյան կայսրության հանդեպ նրանց ունեցած հավակնությունները վերածեց փոխադարձաբար մեկը մյուսին չեզոքացնող ազդակներից բաղկացած փակ եռանկյունու: Փոխելով ու բարդացնելով պատերազմի հետագա ընթացքը՝ փոխադարձ շահերի նման դասավորությունը և դրան գումարված առանձին դերակատարների անձնական ամբիցիաները ճակատագրական եղան արևմտահայության համար, քանի որ ժամանակ ու հնարավորություն տվեցին Օսմանյան կայսրության վարիչներին՝ ամբողջ ծավալով գործադրելու Հայոց ցեղա-

սպանության իրականացման իրենց ծրագիրը:

Ուրեմն պատմության դռը դասերն այսօր մեր պետական ու ռազմական այրերից հրամայաբար պահանջում են հաշվի առնել ոչ միայն գերտերությունների շահերի համադրության և հակադրության հնարավոր հետևանքները, այլև դրանք բանաձևող անհատ գործիչների անձնական հավակնությունները և ամբիցիաները ու պատմության վճռական պահերի համար համբերատար կերպով մշակել և ունենալ մենակ մնալով՝ սեփական ուժերին ապավինելու և ինքնուրույնաբար վերապրելու տարբերակներ:

poghosyansamvel@yahoo.com

Սամվել Ա. Պողոսյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի, Առաջին աշխարհամարտի, Կիլիկիայի նոր և նորագույն շրջանների պատմության հիմնահարցերը:

Հեղինակ է երկու մենագրությունների, մեկ ուսումնական ձեռնարկի և ավելի քան յոթ տասնյակ գիտական հոդվածների:

Summary

THE ISSUE OF LANDING THE ANTANTA TROOPS IN ALEXANDRETTA

(September 1914 –March 1915)

Samvel A. Poghosyan

Key words – Alexandretta, Cilicia, Entente troops landing, Dardanelles, Gallipoli.

Immediately after the outbreak of World War I, the British authorities discussed the issue of landing the troops in Alexandretta. It was an important port in Cilicia, in the northeastern part of the Mediterranean Sea. The landing would entail the destruction of the Ottoman Empire.

For this reason the Turks and Germans were worried, because Britain would need only 30,000 soldiers to organize this military action. Cilicia was populated mostly by Armenians, who were ready to help the British troops. The British Intelligence Service examined the area in detail and gave a positive conclusion on the landing. In January 1915, the British authorities decided to attack the Dardanelles by the forces of the navy and at the same time land at Alexandretta. Nobody in the British elite doubted the success of landing in Alexandretta, but some did not believe in success in the Dardanelles. However, the military operation in Alexandretta was eventually rejected by the British authorities. There were some reasons for this: the French authorities opposed this because they wanted to colonize Cilicia after the war. They were worried that if Cilicia was occupied by British troops, later they would not be able to get it back. The British recognized the rights of France in Cilicia and Syria, but at the same time they wanted to get Alexandretta. The latter was the most important

port in the East of the Mediterranean Sea. Thus, Britain and France prevented each other from landing at Alexandretta. In the end, the Allies decided to land at Gallipoli, which was a great catastrophe for them. Thus, imperialism won, and the allies lost an important chance to overcome the Ottoman Empire. The refusal to land at Alexandretta and the failure in the Dardanelles gave the Turkish government a chance to organize the Armenian Genocide. This is one of the episodes of the story, when an almost real operation was revised at the last moment and this led to negative consequences.

Резюме

ПРОБЛЕМА ВЫСАДКИ ВОЙСК АНТАНТЫ В АЛЕКСАНДРЕТТЕ

(Сентябрь 1914 – март 1915)

Самвел А. Погосян

Ключевые слова – Александретта, Киликия, высадка войск Антанты, Дарданеллы, Галлиполи.

Сразу после начала Первой мировой войны, британские власти обсудили вопрос высадки войск в Александретте. Это был важный порт в Киликии, в северо-восточной части Средиземного моря. Высадка повлекла бы за собой сокрушение Османской империи. Понимая это, турки и немцы были обеспокоены, поскольку Британии понадобилось бы всего 30 000 солдат для организации этого военного мероприятия. Киликия была населена в основном армянами, которые были готовы помочь британским войскам. Британская разведывательная служба подробно изучила этот район и дала положительное заключение о высадке. В январе 1915 года британские власти решили атаковать Дарданеллы силами военно-морского флота и в то же время высадиться в Александретте. Никто в британской элите не сомневался в успехе высадки в Александретте, но некоторые не верили в успех в Дарданеллах. Однако военная операция в Александретте в конце концов была отклонена британскими властями. На это были некоторые причины: французские власти выступали против этого, потому что хотели колонизировать Киликию после войны. Они были обеспокоены тем, что если Киликию оккупируют британские войска, позже не смогут ее заполучить обратно. Британцы признали права Франции в Киликии и Сирии, но в то же время хотели получить Александретту. Последний был самым важным портом на Востоке Средиземного моря. Таким образом, Великобритания и Франция помешали друг другу высадиться в Александретте. В конце концов, союзники решили высадиться в Галлиполи, что и стало для них большой катастрофой. Таким образом, союзники потеряли важный шанс побороть Османскую империю. Отказ от высадки в Александретте и провал в Дарданеллах дали шанс турецкому правительству организовать Геноцид армян. Это один из эпизодов истории, когда почти реальная операция в последний момент была пересмотрена и это привело к негативным последствиям.